

ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Հասարակական աշխարհահամակարգ է.

- 1) ճահիճը
- 2) անտառը
- 3) քաղաքը
- 4) անապատը

2 Հյուսիսային կիսագնդի լեռների ո՞ր լանջերն են առավել շատ անտառապատ.

- 1) հյուսիսային
- 2) հյուսիսարևելյան
- 3) հարավային
- 4) հարավարևելյան

3 Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270°:

- 1) հարավային
- 2) արևելյան
- 3) հյուսիսային
- 4) արևմտյան

4 Քարտեզում 2 կետերի հեռավորությունը 7 սմ է, իսկ իրականում՝ 49 կմ: Այդ քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 70 000
- 2) 1 : 700 000
- 3) 1 : 7000 000
- 4) 1 : 70 000 000

5 Այն ասուպները, որոնք չեն հասցնում մթնոլորտում այրվել և ընկնում են Երկրի վրա, կոչվում են.

- 1) երկնաքարեր
- 2) աստղակերպեր
- 3) գիսավորներ
- 4) արբանյակներ

6 Յուրաքանչյուր ժամային գոտու ժամանակը հարևան գոտու ժամանակից տարբերվում է.

- 1) 15 րոպեով
- 2) 30 րոպեով
- 3) 45 րոպեով
- 4) 60 րոպեով

7

Նկար 1-ում պատկերված է.

- 1) ջրհոր
- 2) գեյզեր
- 3) ջրվեժ
- 4) հրաբուխ

Նկար 1



8

Փոխակերպային ապար է.

- 1) մարմարը
- 2) կրաքարը
- 3) բազալտը
- 4) քարածուխը

9


Մթնոլորտային ցածր ճնշման մարզը կոչվում է.

- 1) ցիկլոն
- 2) տորնադո
- 3) թայֆուն
- 4) անտիցիկլոն

10

Նկար 2-ում n^o թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը բարեխառն լայնություններում:

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4



Նկար 2

11 Նշվածներից ո՞ր ծովը Անտարկտիդայի ավերը չի ողողում:

- 1) Բարենցի
- 2) Բելինսսաուզենի
- 3) Ռոսսի
- 4) Ամունդսենի

12 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 4 մ^2 է, արագությունը՝ 3 մ/վ : Գետի ծախսը կլինի.

- 1) $12 \text{ մ}^3/\text{վ}$
- 2) $70 \text{ մ}^3/\text{վ}$
- 3) $24 \text{ մ}^3/\text{վ}$
- 4) $36 \text{ մ}^3/\text{վ}$

13 Գոլորշացման քանակը արտահայտում են.


- 1) միլիմետրով
- 2) տոկոսով
- 3) գրամով
- 4) բալով

14 Մթնոլորտային տեղումներից ո՞րը Երկրի մակերևույթ չի թափվում ամպերից.

- 1) անձրև
- 2) ձյուն
- 3) կարկուտ
- 4) ցող

15 Նկար 3-ում ո՞ր թվով է պատկերված սավանաների զոնան:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



Նկար 3

16

Ի՞նչն է առավելապես շատ բնորոշ տունդրայի բնական զոնային:

- 1) հողի բազմամյա սառածությունը
- 2) պողոզուլային հողերի գերակշռությունը
- 3) ծառային բուսականության տարածումը
- 4) խոտակեր խոշոր կենդանիների տարածումը

17


Քարտեզ 1-ում Դ տառով n՞ր նեղուցն է նշված.

- 1) Դրեյկի
- 2) Թորեաի
- 3) Բասսի
- 4) Կուկի

18

Քարտեզ 1-ում Ը տառով n՞ր նավահանգիստն է նշված.

- 1) Մելբուռն
- 2) Կանբերա
- 3) Սիդնեյ
- 4) Դարվին



19

Բնութագրումով որոշել թերակղզին.

Ասիայի մեծ թերակղզիներից է և ունի տիպիկ մուսսունային կլիմա: Տարածքի գերակշիռ մասը զբաղեցնում է աշխարհի խոշորագույն երկրներից մեկը: Ո՞ր թերակղզին է.

- 1) Արաբական
- 2) Հինդուստան
- 3) Հնդկաչին
- 4) Սկանդինավյան

20

Ո՞ր լեռնաշղթայից է սկիզբ առնում Հոենոս գետը:

- 1) Բալկաններից
- 2) Անդերից
- 3) Պիրենեյներից
- 4) Ալպերից

21

Նշված ծովային հոսանքներից ո՞րն է սառը.

- 1) Անտիլյանը
- 2) Գոլֆստրիմը
- 3) Այասկայինը
- 4) Լաբրադորյանը

22

Հյուսիսային Ամերիկայում աճում են.

- 1) հնեա և էվկալիպտ
- 2) ակացիա և ժենշեն
- 3) բիզոնի խոտ և սեքվոյա
- 4) սեյբա և բաոբաբ

23

Հարավային Ամերիկայում է.

- 1) Կորդիլիերյան լեռնաշղթան
- 2) Առափնյա դաշտավայրը
- 3) Դեմավենդ լեռնագագաթը
- 4) Գվիանական սարահարթը

24

Ո՞ր լիճն է Հարավային Ամերիկայում:

- 1) Արալյան
- 2) Տիտիկակա
- 3) Լադոգա
- 4) Միչիգան

25

Անտարկտիդան հայտնաբերել են.

- 1) շվեդները
- 2) անգլիացիները
- 3) ամերիկացիները
- 4) ռուսները

26

Ո՞ր նեղուցով է Արաբական թերակղզին բաժանվում Աֆրիկայից.

- 1) Լապերուզի
- 2) Մալակկայի
- 3) Լա Մանշի
- 4) Բար-Էլ-Մանդեբի

27

Տարածքի մեծությամբ աշխարհի գերխոշոր պետություններ են.

- 1) Իտալիան և Շվեյցարիան
- 2) Կանադան և Ավստրալիան
- 3) Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան
- 4) Նիկարագուան և Մեքսիկան

28

Նշվածներից ո՞ր երկիրն ունի ավելի քան 200 մլն բնակիչ.

- 1) Ինդոնեզիան
- 2) Ճապոնիան
- 3) Ղազախստանը
- 4) Ռուսաստանը

29

Նշվածներից ո՞ր երկիրը ելք ունի դեպի Պարսից ծոց.

- 1) Իրանը
- 2) Սիրիան
- 3) Լիբանանը
- 4) Եգիպտոսը

30

Հետամնաց ագրարային երկրներ են.

- 1) Չադը և Եթովպիան
- 2) Հնդկաստանը և Չինաստանը
- 3) Արգենտինան և Մեքսիկան
- 4) Քուվեյթը և Վենեսուելան

31

Երկրի տարածքը կազմում է 20000 կմ², բնակչության թիվը՝ 7 մլն մարդ: Բնակչության միջին խտությունը կլինի.

- 1) 350 մարդ/ կմ²
- 2) 130 մարդ/ կմ²
- 3) 270 մարդ/ կմ²
- 4) 420 մարդ/ կմ²

32 Միգրացիայի պատճառ չէ.

- 1) կազմակերպվածը
- 2) տնտեսականը
- 3) քաղաքականը
- 4) ազգայինը

33 Քաղաքաբնակների բացարձակ թվով աշխարհում առաջին երկիրն է.

- 1) Ռուսաստանը
- 2) Հնդկաստանը
- 3) Պակիստանը
- 4) Չինաստանը

34 Ջարգացման արդյունաբերական փուլում գտնվող երկրներ են.

- 1) Գերմանիան և Բելգիան
- 2) Ֆրանսիան և Իտալիան
- 3) Մոզամբիկը և Բանգլադեշը
- 4) Բրազիլիան և Արգենտինան

35 Գազի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Գերմանիան ու Ֆրանսիան
- 2) Նիդեռլանդները և Ռուսաստանը
- 3) Չինաստանը և Ճապոնիան
- 4) Ավստրալիան և Հնդկաստանը

36 Շաքարեղեգի մշակությամբ աշխարհում առաջատար երկրներից է.

- 1) Ռուսաստանը
- 2) Բրազիլիան
- 3) Կանադան
- 4) Ճապոնիան

37 Չույզերով տրված պետություններից որո՞նք ունեն ցամաքային սահման ՌԴ հետ:

- 1) Շվեդիա և Հայաստան
- 2) Էստոնիա և Վրաստան
- 3) Ուկրաինա և Մոլդովա
- 4) Թուրքիա և Իրան

38

Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|-----------------|--------------|
| 1. Ավստրիա | ա. Ամստերդամ |
| 2. Բելգիա | բ. Փարիզ |
| 3. Նիդեռլանդներ | գ. Բրյուսել |
| 4. Ֆրանսիա | դ. Վիեննա |

- 1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
- 2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 3) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
- 4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

39

Դեպի Կասպից ծով ելք ունի.

- 1) Իրանը
- 2) Աֆղանստանը
- 3) Սաուդյան Արաբիան
- 4) Արաբական Միացյալ Էմիրությունները

40

Ո՞ր պետությունն է գտնվում Հարավային Ասիայում:

- 1) Պակիստան
- 2) Չինաստան
- 3) Մոնղոլիա
- 4) Ճապոնիա

41

Ջուլգերով տրված պետություններից որո՞նք են միապետություն:

- 1) Եգիպտոսը և Թունիսը
- 2) Սվազիլենդը և Լեսոտոն
- 3) Ալժիր և Նիգերիա
- 4) Մարոկկո և Եթովպիա

42

Իտալիային պատկանող կղզի է.

- 1) Թասմանիան
- 2) Սիցիլիան
- 3) Կալիմանտանը
- 4) Կորսիկան

43

«Կեղծ ուրբանիզացիան» բնորոշ է.

- 1) Լատինական Ամերիկային
- 2) Արևմտյան Եվրոպային
- 3) Հարավային Եվրոպային
- 4) Հյուսիսային Ամերիկային



քարտեզ 2

44

Քարտեզ 2-ում Գոգի լեռնազագաթը ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

45

Քարտեզ 2-ում Քաջարանի հանքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

46

ՀՀ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ամենաերկար սահմանն ունի Իրանի հետ:
- 2) Արևմուտքում սահմանակից է Վրաստանին:
- 3) Արևելքում սահմանակից է Ադրբեջանին:
- 4) Հյուսիսում սահմանակից է Թուրքիային

47

ՀՀ կլիմայի վերաբերյալ n^o ր պնդումն է ճիշտ.

- 1) Ամենաշատ տեղումները թափվում են Արփայի գոգավորությունում:
- 2) Հստակ արտահայտված է հյուսիսից հարավ փոփոխվող լայնակի կլիմայական գոտիականությունը:
- 3) Կլիմայաստեղծ գործոններից են մուսսոնները:
- 4) Միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն:

48

Մինչխորհրդային Հայաստանում տնտեսության n^o ր ճյուղերին էր բաժին ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի գերակշիռ մասը.

- 1) շվեյցարական պանրագործությանը և մրգի պահածոների արտադրությանը
- 2) սև մետաղաձուլությանը և կաշվի-կոշիկի արտադրությանը
- 3) գորգագործությանը և կաուչուկի արտադրությանը
- 4) պղնձաձուլությանը և գինու-կոնյակի արտադրությանը

49

Մեծամորի աէլի վերաբերյալ n^o ր պնդումն է ճիշտ.

- 1) Միակ ատոմակայանն է հարավկովկասյան տարածաշրջանում:
- 2) Աշխատում է տեղական միջուկային վառելիքով:
- 3) ՀՀ ամենահզոր էլեկտրակայանն է:
- 4) Արարատի մարզում է:

50

Չույզերով տրվածներից որո՞նք են ոսկու հանքավայրեր.

- 1) Կապանը և Ալավերդին
- 2) Քաջարանը և Ագարակը
- 3) Շվանիձորը և Թեժ լեռը
- 4) Մեղրաձորը և Սոթքը

51

Թթվային անձրևների առաջացման պատճառներից է.

- 1) մթնոլորտում ածխաթթու գազի առկայությունը
- 2) խոշոր քաղաքներում զբոսաշրջության զարգացումը
- 3) հանքային պարարտանյութերի օգտագործման չարաշահումը
- 4) գործարաններից ծծմբային միացությունների արտանետումները

52

«Բնական ռեսուրս — վերականգնման հնարավորություն» գույզերից ընտրել ճիշտը:

- 1) կենսաբանական ռեսուրս — անսպառ
- 2) կլիմայական ռեսուրս — սպառվող վերականգնվող
- 3) երկրաջերմային ռեսուրս — անսպառ
- 4) հանքային ռեսուրս — սպառվող վերականգնվող

53

Տրվածներից ո՞րը հողաբարելավման միջոցառում չէ:

- 1) քարամաքումը
- 2) ջրամբարների կառուցումը
- 3) գերխոնավ հողերի չորացումը
- 4) հակակերոզիոն միջոցառումների կազմակերպումը

54

Տրվածներից ո՞րն է ՄԱԿ-ի հատուկ մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն:

- 1) ՅՈՒՆԵՍԿՕ
- 2) ՅՈՒՆԻՍԵՖ
- 3) ՅՈՒՆԵՊ
- 4) ՅՈՒՆԻԿՏԱԴ

55

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թույլ զարգացած երկրների բնառեսուրսային ներուժը վիթխարի է, օգտագործման տեսանկյունից արդյունավետությունը՝ ցածր:
- 2) Թույլ զարգացած երկրներում զանգվածային անգրագիտությունը հետամնացության ցուցանիշներից է:
- 3) Թույլ զարգացած երկրների տնտեսության մեջ գերակշռողը գյուղատնտեսության բաժինն է:
- 4) Թույլ զարգացած երկրներում բնապահպանական հիմնախնդիրներ չկան:

56

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել մնացորդային ծագում ունեցող լճերը.

- | | |
|------------|----------|
| 1) Կասպից | 5) Վերին |
| 2) Լադոգա | 6) Էյր |
| 3) Արալյան | 7) Սևանա |
| 4) Նյասա | 8) Չադ |

57

Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.

- | | |
|------------|-------------|
| 1) Մուրեյ | 5) Տիգրիս |
| 2) Ինդոս | 6) Օրանժ |
| 3) Մեկոնգ | 7) Նիգեր |
| 4) Զամբեզի | 8) Սիրդարյա |

58

Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».

- | | |
|-------------|-----------|
| 1) Կանադա | 5) Իրան |
| 2) ԱՄՆ | 6) Լատվիա |
| 3) Ուկրաինա | 7) Սիրիա |
| 4) Թուրքիա | 8) Եմեն |

59

Գրել այն երկրների համարները, որտեղ գերակշռում է մահմեդականությունը.

- | | |
|--------------------|--------------|
| 1) Հնդկաստան | 5) Պակիստան |
| 2) Հարավային Կորեա | 6) Ալբանիա |
| 3) Չինաստան | 7) Թուրքիա |
| 4) Բանգլադեշ | 8) Տաջիկստան |

60

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են մեքենաշինությամբ.

- | | |
|--------------|--------------|
| 1) Ավստրալիա | 5) Աֆղանստան |
| 2) Գերմանիա | 6) Թուրքիա |
| 3) Ճապոնիա | 7) Հնդկաստան |
| 4) Իրան | 8) Ղազախստան |

61

Գրել այն բնակավայրերի համարները, որոնք երկաթուղային կայարաններ չեն.

- | | |
|---------------|-------------|
| 1) Մարալիկ | 5) Արարատ |
| 2) Սոթք | 6) Աբովյան |
| 3) Վարդենիս | 7) Գորիս |
| 4) Վաղարշապատ | 8) Մարտունի |

62

Տրված պետությունների համարները դասավորել դրանց տարածքի մեծության նվազման կարգով:

- 1) Չինաստան 2) Ռուսաստան 3) Կանադա 4) ԱՄՆ

63

ՀՀ տրված քաղաքների համարները դասավորել Երևանից ունեցած հեռավորության աճման կարգով.

- 1) Բերդ 2) Աշտարակ 3) Սևան

(64-65). Քաղաքի բնակչության թիվը 80 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 1500 մարդ: Եկաճների թիվը 2200 մարդ է, մեկնաճների թիվը՝ 1800 մարդ:

64 Որոշել միգրացիայի մնացորդը:

65 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

66 Երկրում ցորենի ցանքատարածությունների մակերեսը 4 մլն հա է, համախառն բերքը՝ 16 մլն տ: Որքա՞ն է ցորենի միջին բերքատվությունը:

67 24000 կՎտ/ժ էլեկտրաէներգիա արտադրելու համար քանի՞ տոննա քարածուխ է հարկավոր(քարածխի ջերմային գործակիցը 1 է):

68

Երկրի բնակչության թիվը 12 մլն մարդ է, տարածքի մակերեսը՝ 80 000 կմ²: Որքա՞ն է երկրի բնակչության միջին խտությունը:

69

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Բասենի դաշտը տարածվում է Ճորոխ գետի վերին հոսանքի ավազանում:
- 2) Խարբերդի դաշտում միախառնվում են Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերը:
- 3) Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրադիրը Ալաշկերտի դաշտն է:
- 4) Երզնկայի դաշտը Արևմտյան Եփրատի վերին հոսանքի ավազանում է:
- 5) Կարնո դաշտը Արևմտյան Եփրատի հովտում է:
- 6) Արևելյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից են Խնուսի, Մշո և Խարբերդի դաշտերը:

70

ՀՀ Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) ՀՀ միակ մարզն է, որը չունի արտաքին սահմաններ:
- 2) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները:
- 3) Շատ հարուստ է հանքային աղբյուրներով:
- 4) Անտառները տարածվում են մարզի արևելյան շրջաններում:
- 5) Արևմտյան սահմանն անցնում է Գեղամա հրաբխային լեռնավահանի ջրբաժան գծով:
- 6) Կենտրոնական շրջաններում տիրապետողը կիսաանապատային լանդշաֆտներն են: